ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ.

ՀՐԱՄԱՆ

Թիվ 3-Լ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի թիվ 1091-Ն որոշման 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ոստիկանության տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետև՝ Կազմակերպություն) պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական միջոցներով ծրագրերի իրականացման նկատմամբ պատասխանատու ստորաբաժանում սահմանել ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությանը:

2. Հրամանը ծանոթացնել Կազմակերպությանը, ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

Պարտականությունները ժամանակավոր կատարող,
ոստիկանության գեներալ-մայոր **Վ.Ղազարյան**

«09» 01 2023թ.

ք. Երևան